ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01
17 ՀՈՒՆՎԱՐԻ 2022թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Հրայր Թորոսյանը, Վահե Նալբանդյանը, Ստեփան Օհանյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Լիպարիտ Նալբանդյան, Կամո Ղարաջյան, Միշա Զալինյան, Աբգար Մագթաղյան, Հակոբ Վարդանյան, Աշոտ Մեսրոպյան, Գագիկ Ղարաջյան, Էլմիրա Ռեվազյան, Սմբատ Սուքիասյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Խաչիկ Վարդանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Թամարա Գրիգորյանը

Լսեցին
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԹԱՄԱՐԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2022թ. հունվարի 17-ի թիվ 01 նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01/

Լսեցին
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱՋՅԱՆ/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է:

Գյուլագարակ համայնքի 2021 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի կատարման մասին համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02/

Լսեցին
ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԷԼՄԻՐԱ ՌԵՎԱՋՅԱՆ/

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշեց.

Հաստատել 2022թ. տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 03/

Նիստն արձանագրեց՝ Թամարա Գրիգորյան

_____